

ՌԱՆԿՆՈՒՆԵՐԵԷԷՆ ԲԱՏԻՕ ՍԵՒԱՆ-ը

Լիբանանի բոլոր շրջաններում մեջ, հետևեալ ալիքներում վրայ

* Լիբանանի և Սուրիոյ ժովեզերեայ շրջաններում, Լեռնալիբանանի, Պեքալի, Սալտալի և Թրիփոլի մեջ՝ 101.5 FM ալիքին վրայ:

* Հիւսիսային Լիբանանի մնացեալ շրջաններում մեջ 101.3 FM ալիքին վրայ:

* Պէրճի և Լեռնալիբանանի մեջ կա՛ն 90.8 FM ալիքին վրայ:

Հեռ. : 01-567161-2-3 Fax: 01-567168

* Cablevision 11700 GHz digital. * Կայքէջ: www.radiosevan.com

ՆԱԽԱԳԱՐ ՍԸԼԵՅՄԱԸ ԸՆԴՈՒՆԵՅ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԻՍՈՒՐԻ ՆԱԽԱԳԱՐԸ

Հանրապետութեան նախագահ Միշէլ Սըլէյման. Պատասխանատուի մէջ ընդունեց Արեւելեան Թիսուրի նախագահ Ժոզէ Ռամոս Հորթալ: Նախագահը՝ իր հիւրին հետ քննարկեց երկու երկիրներում միջեւ փոխարարութիւնները սերտացնելու հնարաւորութիւնները:

Նախագահ Սըլէյման նաեւ ընդունեց փոխվարչապետ Իսամ Ապու Շամրան. տնտեսութեան և առևտուրի նախարար Մուհամմետ Սաֆատին, նախկին նախարար Մուհսէն Տալլոյը:

«ԸՆԿՎԱՆՈՒԹԵԱՆ ՊԻՏԻ ՀԱՄԱՐԷ, ԱՌԱՅ ԿԵՅՈՒՆՔԵՆԵՐԸՆ ԵՆՎԵԼՈՒՄ», ԸՍԱՊ ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ ԺԱՆ ՕՂԱՍԱՊԵԱՆ

Ժամաբանի շրջանին մէջ, Ղոպեյաթ թաղամասին մէջ, ընտրական հանրահաւաքի մը ընթացքին արտասանած իր խօսքին մէջ, պետական նախարար Ժան Օղասապեան ըսաւ, թէ ազատութիւնը և անկախութիւնը միայն լուրջութեամբ չեն, այլ լիբանանեան հայրենիքն ու իւրաքանչիւր լիբանանցիի իրաւունքը: «Յեղաշրջումի բոլոր փորձերուն դէմ պիտի կենանք, մերժելով խաւարը և պահանջելով ճշմարտութեան բացայայտումը», ըսաւ Օղասապեան:

Իր խօսքը Աշրեֆիէի բնակիչներուն ուղղելով, Օղասապեան ըսաւ. «Դուք պիտի որոշեք պետականութեան անցելու, եւ ո՛չ՝ փոքրիկ պետութիւններու, ապահովական փոքր գօտիներու, ապօրէն գէնք պահելու ընտրանքին յօգուտ: Չենք միայն երկրին բանակին մօտ գոյութիւն պիտի ունենայ», ըսաւ ան, մերժելով վերադառնալ անցեալին:

ՆԵՏԻՄ ԾԵՄԱՅԵԼ ԱՅՅԵԼԵՅ ՍԱԳՐԱՊ

Պէրճի Առաջին ընտրաշրջանի մարտի համայնքի թեկնածու Նետիմ Ծեմայել այցելեց Մաարապ և հանդիպում մը ունեցաւ Լիբանանեան Ուժերու գործադիր խորհուրդի նախագահ Սամիր Ժաաթայի հետ: Սոյն հանդիպումին ընթացքին նաեւ քննարկուեցաւ Պէրճի Առաջին ընտրաշրջանին մէջ, հայ կաթողիկէ համայնքին պատկան աթոռին համար առաջադրուած հայ թեկնածուներուն պարագան: Հանդիպումէն ետք, Նետիմ Ծեմայել յայտարարեց, թէ հայ համայնքին պատկան աթոռին հարցը շուտով պիտի լուծուի յառաջիկայ քանի մը օրերուն ընթացքին:

ՎԱՐՉԱՊԵՏ ՍԻՆՈՐԱ ԿԸ ՄԱՅՅ ԼԱԿՏԵՍ

Վարչապետ Ֆուատ Սինորա յայտնեց, թէ «Ժամաա Իսլամի»-ի հետ համաձայնութիւնը կ'ընթանայ նախագծուած եղանակով: Այսինքն՝ «Ժամաա Իսլամի»-ն յետո պիտի կոչէ Սալտայի մէջ իր թեկնածուն, իսկ Պէրճի մէջ պիտի ունենայ իր սեփական թեկնածուն: Երկու ընտրացանկերուն մէջ, Մուսթաքալալ Հոսանքը և «Ժամաա Իսլամի»-ն պիտի քուէարկեն միացեալ ցանկեր:

ՊԱՐՈՒՏ ԴԱՏԱՊԱՐՏԵՅ ԵՒ ՊԱՏԱՍԵԱՆԱՏՈՒՌՈՒԹԵԱՆ ԿՈՉ ՈՒՂՂԵՅ ԲԱՂԱԸԱՑԻՆԵՐՈՒՆ



Ներքին գործոց նախարար Չիատ Պարուտ երկէ առաւօտեան գրաւոր և շուտափոյթ կամակ մը յղեց Բարգաւաճումի և վերաշինութեան խորհուրդին, ինչպէս նաեւ Լիբանանի ելեկտրական ընկերութեան՝ լուսաբանութիւններ պահանջելով Պէրճուր - Ճիւնի մայրուղիին վրայ պատահած խճողումին պատճառներուն համար: Պարուտ՝ պահանջեց պատժամիջոցներու դիմել այսօրուան խճողումին պատասխանատուներուն դէմ: Ներքին գործոց նախարար Չիատ Պարուտ կըսեց մամուլի ասուլիս մը և քննադատեց երկէ առաւօտեան Պէրճուրի գլխաւոր մայրուղիներուն վրայ պատահած խճողումը, զայն նկատելով իբրեւ անկրկնելի բացառութիւն մը:

Պարուտ իրահանգեց մինչեւ Յունիս 7-ը դադարեցնել բոլոր տեսակի ճանապարհաշինութիւնները և քաղաքացիներէն պահանջեց իրաւական քայլերու դիմել և յանցագործներու դէմ դատական հայց բարձրացնել:

«ՄԱՐՏ 14-Ի ՈՒԺԵՐՈՒՆ ՄԵՎՄՆԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԲՈՒՐ ԵՆԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸՆ ԳԵՐԻՎԵՐ ԿԸ ՄՆԱՅ», Կ'ԸՍԵ ՈՒՂԼԻՏ ԾՈՄՊԼԱԹ

Ընկերվար Յառաջդիմական կուսակցութեան նախագահ Ռալիտ Ծոմայլաք ըսաւ, որ խորհրդարանի ընտրութիւնները կայացնելու ժամկէտը որքան մօտեանայ, լիբանանցիներուն մօտ պարտի գարգանալ ընտրութիւնները հանդարտ, ազատ և սովորական պայմաններու մէջ կատարելու գիտակցութիւնը: «Այ Անպա» շարքաբերքէն լոյս ընծայուած իր յօդուածին մէջ, Ծոմայլաք դիտել կու տայ, որ Մարտ 14-ի Ուժերուն միասնակամութիւնը կը մնայ բոլոր ենթադրութիւններէն գերիվեր: Ծոմայլաք կը նշէ, թէ լիբանանցիները պէտք է նախանձախորհրդի ըլլան ժողովրդավարական կարգերը պահպանելու ի խընդիր: Ծոմայլաք՝ միաժամանակ կը շեշտէ Թայէֆի համաձայնագիրը գործադրելու անհրաժեշտութիւնը. Սուրիոյ հետ մասնաշարժի փոխարարութիւններ պաշտպանելու անհրաժեշտութիւնը, սակայն փոխադարձ վշտաւորեան վրայ յենած և ս-

ՍՍՏՏ ՀԱՐԻՐԻ, ԴՅԱՈՍԳԻԿԱՅ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԵՐԸ ՊԻՏԻ ՈՐՈՇԵՆ ԼԻԲԱՆԱՆԻ ԶԱՂԱԸԱՑԱՆ ՈՒՂՈՒԹԻՒՆԸ

Մուսթաքալալ Հոսանք խորհրդարանական խմբաւորումի նախագահ Սաատ Հարիրի Ղըրէյթիմի մէջ ընդունեց Պեքալի շրջանի ժողովրդային պատուիրակութիւնները: Սաատ Հարիրի, Ներկաներուն առջեւ խօսք առնելով յայտնեց, թէ Ռաֆիք Հարիրիի սպանութեամբ, Լիբանանի վրայ իրենց տիրապետութիւնը պարտադրել փորձող հոսանքները, այսօր կը փորձեն խորհրդարանի ընտրութիւններուն միջոցաւ իրագործել իրենց ծրագիրը: Հետեւաբար, խորհրդարանի յառաջիկայ ընտրութիւնները ճակատագրական պիտի ըլլան, որովհետեւ անոնք պիտի որոշեն Լիբանանի քաղաքական դիմագիծը:

Օրուան ընթացքին, Հարիրի ընդունեց այլ պատուիրակութիւններ:

ՊԱՊԸ ԺԱՄԱՆԵՅ ՍՐԲԱԶԱՆ ՀՈՂԵՐԸ

Պենտիքթոս 16-րդ Պապը երկէ ժամանեց Սրբազան հողերը, ուր յայտարարեց, թէ հակա-սեմականութիւնը ամբողջութեամբ անընդունելի է: Պապը նաեւ այցելեց Իսա Վաշէմի յուշահամալիրը: Ան նաեւ նշեց ազատ հայրենիք մը ունենալու պաղեստինցի ժողովուրդին իրաւունքը:

Պենտիքթոս 16-րդ Պապը հանդիպում մը ունեցաւ նախագահ Շիմոն Փեթրօզի հետ: Ան այսօր՝ Երեքշաբթի պիտի այցելէ Արեւմտեան Պատը և հանդիպում մը ունենայ Իսրայէլի գլխաւոր ռապոմնապետին հետ: Վաղը՝ Չորեքշաբթի պիտի այցելէ Բեթղեհէմ և տեսակցութիւն մը ունենայ Պաղեստինեան իշխանութիւններու նախագահ Մահմուտ Ապպասի հետ: Պապը՝ Հինգշաբթի օր պատարագ մը պիտի մատուցէ Նազարէթի մէջ և հանդիպում մը ունենայ վարչապետ Պենիամին Նեթանիահուի և ֆրանգիսքան հայրերու հետ: Ուրբաք օր, Պենտիքթոս 16-րդ Պապը տեսակցութիւն մը պիտի ունենայ Ուղղափառ եկեղեցւոյ ներկայացուցիչներու հետ և եզրափակէ իր ուղևորութիւնը:

Յորդանանի մէջ գործող իսլամ Եղբայրներ կազմակերպութիւնը հրապարակեց հաղորդագրութիւն մը, ուր դիտել տրուած էր, որ Հռոմի Պենտիքթոս 16-րդ Պապին այցելութիւնը Ամման առանձնապէս որեւէ նորութիւն չէր բերած շրջանի ժողովուրդներուն: Այստեանդերձ, նախքան Յորդանանէն իր մեկնումը Պապը փոխադարձ ներողամտութեան կոչ ուղղեց քրիստոնեաներուն և իսլամներուն:

Պաղեստինեան իշխանութեան նախագահ Մահմուտ Ապպաս յայտարարեց, թէ Հաթիի խորհրդաժողովը տեղի պիտի ունենայ Յունիս 1-ին, Արեւմտեան Ափին մէջ:

ՄՈՒՊԱՐԱԶ ՆԵՐԱՆԻԱԶՈՒԵՆ ՊԱՀԱՆՁԵՑ ԽԱՅՆԱԼ ԵՐԿՈՒ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԸՆՏՐԱՆԸ

Վարչապետ Պենիամին Նեթանիահու այցելեց Շարմ էլ Շէյխ, ուր հանդիպում մը ունեցաւ նախագահ Հիւսնի Մուպարաբի հետ: Հանդիպումէն ետք, նախագահ Մուպարաբ դիտել տուաւ, որ Եգիպտոս և համայն աշխարհը կ'ակնկալեն Միջին Արեւելքի համար արդար և ամբողջական խաղաղութիւն: Իր կարգին, Նե-

թանիահու ըսաւ, թէ Միջին Արեւելքի հակամարտութիւնը կրօններու միջեւ պայքար մը չէր, այլ՝ չափաւորական և արմատական ուժերու միջեւ պայքար մը: Մուպարաբ և Նեթանիահու ունեցան միացեալ մամուլի ասուլիս մը, ուր նախագահ Մուպարաբ՝ Նեթանիահուին կոչ ուղղեց ճանձնալ երկու անկախ պետութիւններու ընտրանքը:

դորդեցին, թէ շաբաթավերջին, Ամմանի մէջ տեղի պիտի ունենայ Եգիպտոս, Իսրայէլ, Յորդանան եռակողմանի խորհրդաժողով մը, ուր պիտի քննարկուի Միջին Արեւելքի խաղաղութեան գործընթացը:

Յորդանանի Ապպալա Երկրորդ թագաւորը երկէ, պաշտօնական այցելութիւն մը տուաւ Դամասկոս: Յորդանանի վեհապետը անմիջապէս հանդիպում մը ունեցաւ նախագահ Պաշար Ասատին հետ: Երկու ղեկավարները միասնաբար քննարկեցին Միջին Արեւելքի խաղաղութեան գործընթացը: Իսրայէլեան աղբիւրներ հա-

ՊԱՇՇԱՐ ԱՍԱՏ Կ'ԱՊՐԻ ՍԱՌՑԱԶԱԼԻ ԳԱՐՈՒՆԸ

«Ֆայնէշըլ Թայմզ» բրիտանական օրաթերթը իր երեկուան համարով լոյս ընծայած է յօդուած մը, ուր կը գրէ, թէ Եկաժ Եր հանգրուան մը, ուր Նոյնիսկ պատկանումը ամբողջական պետութիւններ սկսան քննադատել Սուրիան, սակայն այսօր՝ Պաշար Ասատ կ'ապրի ինքնակառավարման մեթոտով, որ հանգիստ ժամանակաշրջան մը, աւելի շիտակը՝ կապրի իր երկրին նկատմամբ ամերիկեան սառցափախ գարունը: Օրաթերթը միաժամանակ կը նշէ, թէ Ռաշիսկըն յաջողած է համոզել Սուրիան իր դէմ գործելու փոխարէն՝ միասնաբար աշխատելու: Օրաթերթը միաժամանակ կը գրէ, թէ ԱՊՀ-իստանուի մէջ Ռաշիսկընի առած քայլերը կ'ընթանան Իրանի հետ համախորհուրդ:

ՀԸՉՊԱԼԼԱՅԻ ՑԱՆՑԻՆ ԴԵՍ ԿՃԻՈՒ ԿՍՏԱԼՈՒՏ

Եգիպտական արդարադատութեան աղբիւրներ կը հաւաստեն, թէ Եգիպտական ատեանը յառաջիկայ մէկ քանի օրերուն ընթացքին, Հրգապալայի ընդատակեայ ցանցին անդամներուն հետ կատարած իր հարցաքննութիւններուն եզրակացութիւնը պիտի փոխանցէ զինուորական ատեանին: Եգիպտական ատեանին կարծիքով, Հրգապալայի անդամներուն դէմ արձակուելիք վճիռը պիտի յաշտանայ, այսինքն պիտի արձակուի մէկ քանի օրերու ընթացքին: Ատեանը արդէն իսկ յաճ է ամբաստանելներու դէմ կատարուած բոլոր վկայութիւնները: Նշենք, թէ ամբաստանելներուն թիւը կը հաշուէ՝ 49 անձ:

ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՒԱՔ

Տեղի կ'ունենայ Շաբաթ, 16 Մայիս 2009-ին, երեկոյեան ժամը 7:00-ին, Նոր Հաճնոյ կախկին Սահակեան Գ-ուլէժի շրջափակէն ներս:

Հաւաքի աւարտին տեղի պիտի ունենայ ազգային յեղափոխական երգերու փառատօն:

ՀՐԱԷՐ

Ս.Գ.Կ. ԸՆՏՐԱԿԱՆ ԿԵԳՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

Արժեքներէ Չսյնող Զոհեարէ Պետսպասնութեան